«ՎՐԱՍՏԱՆ»-Ը 95 ՏԱՐԵԿԱՆ Է

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՀՈԲԵԼՅԱՐԻՆ

Ախալքալաքիի շրջանի ընթերցողների, մտավորականության, ստեղծագործ անհատների ու թղթակիցների, կրթության կենտրոնի աշխատողների անունից խորին երախտագիտությամբ շնորհավորում եմ «Վրաստան» թերթի 95-ամյա լույսընծայման առթիվ՝ ցանկանալով թերթի խմբագրակազմին, նրա բոլոր աշխատակիցներին ստեղծագործական նվիրվածություն, պատասխանատվության չզիջող զգացում, ստեղծագործական բեղմնավոր գործունեություն Ձեզ՝ հարգարժան խմբագիր, թերթի գոյատեւման, նրա հեղինակության, գործի նկատմամբ հետեւողական գործունեության առթիվ:

Թերթի բազմահազար ընթերցողները խորապես զգում են այն համընդհանուր դերը, որ ընթերցող լայն շրջանների վրա թողնում է թերթի յուրաքանչյուր համարը՝ իր բազմաժանր ու թեմատիկ բազմազանությամբ, հարուստ բովանդակությամբ, դաստիարակչական ու ճանաչողական բազմակողմանի նշանակությամբ:

Այսօրվա «Վրաստանի» ժամանակագրական միավորը դարն է, նրա գոյության գրավականը՝ ընթերցողների բազմահազարանոց հանրությունը:

Դեռեւս անցյալ դարի քսանական թվականներից, մեր հաստատ համոզմամբ, թերթը հսկայական դեր է խաղացել ժողովրդական լայն մասսաների, նրանց դարավոր բարեկամության, ստեղծագործական ու մշակութային կյանքի, երիտասարդության եւ աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործում:

Թերթի բազմամյա ավանդույթին հավատարիմ՝ ցայսօր էլ պահպանում եք թերթի հեղինակությունը եւ դերն ընթերցողների շրջանում. նրա արտաքին ու ներքին ձեւավորումը, ժանրային բազմազանությունը, թեմատիկ, նպատակային ուղղվածությունը, հոդվածների խորագրերը, նրանց համառոտ ու դիպուկ անոտացիաները միանգամից գրավում են ամենատարբեր մասնագիտության տեր մարդկանց ու ընթերցող անհատներին:

Բազմաբովանդակ ու լայն է մեր կյանքի ամենատարբեր ընդգրկումների ոլորտների ներկայացնելը թերթի միջոցով: Նրա պետական, քաղաքական, հասարակական, մտավոր ու մշակութային թեմաներով հոդվածները, հարցազրույցները, արդիական պահանջներով լեցուն հաղորդագրությունները մեծապես ազդում են մարդկանց հասարակական ու կրթա-դաստիարակչական գործի արդյունավետ ընթացքին, նրանց աշխատանքային ու գործարար ձեռքբերումներին:

Ժամանակների հարաշարժ ընթացքի միջով թերթի հրատարակչությունը, նրա դժվարին ու պատասխանատու, նաեւ պատվաբեր գործը անմնացորդ ու անվարան տնքնանքով, եռուն գործունեությամբ առանց խախտելու թերթի հրատարակչական հաճախականությունը, հարգարժան խմբագի'ր, ձեր աշխատակազմով որպիսի՜ արժանապատվությամբ եւ լարված հետեւողականությամբ, անզիջում գործունեությամբ անցյալ դարավերջի ու մեր դարի առաջին տարիներին կարողացաք առանց ընդհատումների եւ չմարող արժանապատվությամբ թերթի յուրաքանչյուր համարը հասցնել ընթերցողներին: Այդ նվիրական գործին հավաքագրվեց բարերարների, անհատ մարդկանց, պետական հիմնարկ-ձեռնարկությունների նյութական ու բարոյական աջակցությունը:

Մենք՝ մտավորականներս, հասարակական, քաղաքական բնագավառի աշխատողներս, մեծապես երախտապարտ ենք այն բանի համար, որ կյանքի հանապազօրյա դեպքերն ու իրադարձությունները, պետական որոշումներն ու այլ բնույթի տեղեկություններն ստանում ենք «Վրաստան» թերթի միջոցով, ուր մշտապես լույս են ընծայվում կրթության, սոցիալական, հասարակական, քաղաքական բնույթի բազմաթիվ որոշումներ: Թերթի էջերում ընթերցողը գտնում է գրեթե իրեն հուզող բոլոր հարցերի պատասխանները, դրանք, անշուշտ, ընդգրկում են ընթերցողների նախասիրությունների լայն շրջանակ՝ պետական, վարչական, կրթական, սոցիալական, ստեղծագործական, մարզական, խորհրդատվական եւ այլ ոլորտներ:

Այս օրերին ուսուցչական աշխատանքի որակավորմանը մեծապես նպաստող կրթության եւ գիտության նախարարության Ազգային ծրագրի կենտրոնի նյութական, տեսամեթոդական աջակցության, արդյունավետ մեկնաբանությունների եւ առավել արժեքավոր լրատվական տեղե- կությունների իմաստով մանկավարժական բնագավառի ողջ աշխատակազմի անունից մեր երախտագիտությունն ենք հայտնում թերթին՝ ժամանակին ու բազմակողմանի տեղեկատվության համար:

Ուրախությամբ պետք է նշեմ, որ տարեցտարի ավելանում է մեր մտավոր ոլորտի բաժանորդների թիվը, եւ դա խոսում է թերթի խաղացած բազմաբնույթ դերի ու նշանակության մասին:

Պատահական չէ այն փաստը, որ թերթը Վրաստանում ճանաչվեց 2015թ. Լավագույն թերթ: Անշուշտ, թերթի ժողովրդականության ու հաջողությունների գործում մեծ է իսկական մտավորական ու նվիրյալ թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանի դերը եւ նշանակությունը:

Այս բարդ ու դժվարին դարում, թերթը որպես նշանաբան ունենալով հանդուրժողականությունը, ժողովուրդների բարեկամությունը, շարունակում է իր լուսավոր ուղին: Անգնահատելի է թերթի դերը մանավանդ հայալեզու շրջանների համար. այն հնարավորություն է տալիս ազգաբնակչությանն ինտեգրվելու երկրի քաղաքական, հասարակական ու տնտեսական կյանքին:

Վերջում հիացմունքով ու խորին երախտագիտությամբ, Ձեզ՝ հարգելի' խմբագիր, թերթի խմբագրակազմին, ընթերցող լայն շրջաններին, ստեղծագործական ազնիվ վերաբերմունք դրսեւորող թղթակիցներին, թերթին հավաքագրված բարերարներին ու անհատներին կրկին ու կրկին ցանկանում ենք ստեղծագործական ու հետեւողական արդյունավետ աշխատանք, պետական ու ազգային նպատակաուղղված գործունեություն, թերթի բազմամյա ավանդույթներին հավատարիմ տքնաջան աշխատանք՝ շաբաթաթերթի հետագա գոյատեւման ճանապարհին:

ՆԱՐՑԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ախալքալաքիի ռեսուրս-կենտրոնի պետ

ՈՒՂԻ ՏՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ

Սիրելի բարեկամներ, մեր միակ Համավրաստանյան հայատառ թերթը՝ «Վրաստանը», բոլորեց իր բեղուն կյանքի 95-րդ տարին: Կյանք, որը նվիրվեց երկրի հայազգի բնակչությանը, եւ նվիրվեց լիաբուռն ու անմնացորդ:

Այդ նա էր, որ տասնամյակներ շարունակ, երբ դեռ հեռու էին հեռուստատեսության եւ ինտերնետի դարաշրջանները, ինֆորմացիայի գերակա աղբյուր էր մեր ժողովրդի համար՝ սկսած խրճիթ-ընթերցարաններից ու լիկբեզներից, ուր հասած թերթի հերթական միակ համարն ընթերցվում էր դեռեւս անգրագիտությունը չթոթափած բնակչությանը: Նա, որը երկրի տնտեսական, գիտական, սոցիալական, մշակութային, մարզական վերելքի տրուբադուրն էր, եւ որի հրապարակումներն ընդունվում էին անվերապահ հավատով: Ու գլխավորը՝ «Վրաստանը» ոչ միայն երկրի հայազգի ու հայահոծ շրջանների կյանքի տարեգիրն էր, նրանց երակազարկի բաբախումների գրառողը, այլեւ վրացի եւ հայ ժողովուրդների դարավոր բարեկամության եւ մտերմության արձանագիրը: Թերթիր նրա ժամանակից խունացած համարները, եւ քո դեմ կհառնի վիրահայոց ողջ պատմությունը՝ իր վերելքներով ու վայրէջքներով, իր անվանի մարդկանցով ու լավ գործերով, ապագային ու վաղվա օրվան միտված հազարավոր հիանալի նախաձեռնություններով: Ու թե պատմության ու քաղաքականության վայրիվերումները հաճախ խաթարել են սիրելի թերթի բնականոն կյանքը, ստիպել խարխափել բարդ ու դժվարին պահերի աղջամուղջում՝ միեւնույն է, «Վրաստանը» պատվով է հաղթահարել խոչընդոտները եւ հասել մինչեւ մեր օրերը՝ մինչեւ նոր Վրաստան՝ ազատ եւ ինքնիշխան պետության դարաշրջան:

Հարգանքով հիշենք հայ լրագրողների եւ թղթակիցների բազում սերունդներին, որոնք շուրջ մեկ դար ամենազորեղ զենքով՝ գրչով, պայքարեցին նոր կյանքի համար, նաեւ բոլոր նրանց, ովքեր այսօր էլ պատվով են կատարում իրենց միսիան՝ նոր կյանքի պահանջներին համապատասխան:

Հարգելի Վան Վաղարշակի, սիրելի «վրաստանցիներ», սրտանց շնորհավորում եմ բոլորիդ սիրելի «Վրաստան» թերթի պայծառ տարելիցի առիթով, ցանկանում առողջություն եւ ստեղծագործական նոր հաղթանակներ՝ ի փառս Վրաստան երկրի եւ նրա հայազգի բնակչության, հանուն խաղաղության եւ հանդուրժողականության՝ համայն աշխարհում:

ԺՈՐԱ ՍՆԽՉՅԱՆ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի մշակույթի ծառայության պետ, ՎՀԳ «Վերնատուն» միության նախագահ

ԱՌԱՆՁ ՔԵԶ ԴԺՎԱՐ ԿԼԻՆԵՐ, ՍԻՐԵԼԻՍ

Իմ ամենասիրելի, ամենամտերիմ եւ ամենահասանելի բարեկամ.

Քեզ ճանաչում եմ մանկուց, դպրոցական նստարանից, ավելի ճշգրիտ՝ 6-7-րդ դասարանից եւ սիրահարվել քեզ, տասնյակ տարիներ մերձեցել, մտերմացել ու հարազատացել ենք: Դրա համար է, որ ուզում եմ այսօր անկեղծանալ եւ ասել այն ամենը, ինչ զգում եմ քո հանդեպ, ու ինչն ամբարվել է մեջս մեր ծանոթությունից ի վեր:

Միշտ անհամբերությամբ սպասում եմ մեր հանդիպումներին, ինձ համար դարձել ես անհրաժեշտության նման մի բան, ու, հաստատ, առանց քեզ, սիրելի թերթ, դժվար թե կարողանամ պատկերացնել ինքս ինձ:

Ունես պատկառելի տարիք, բոլորեց քո ինն-սունհինգդ: Ժամանակի հոլովույթում դա մի ակնթարթ է, սակայն այդուհանդերձ, դու վաղուց հաստատել ես քո լինելիությունը, կաս ու կանգուն ես, ու քո պատմությունը լրատվական-հրատարակչական հաջողված գործունեության ակնառու օրինակ է: Գիտեմ, որ շատ փորձություններ ես հանդիպել, ծանր պահեր ես ունեցել, սակայն կարողացել ես քո որդեգրած ազնիվ ու շիտակ ընթացքով հաղթահարել ամեն մի դժվարություն: Հիմա էլ քայլում ես ժամանակին համընթաց, պահպանում ես արդիականության սթափ զգացողություն, ունես իրականության ողջամիտ ընկալում, իրավիճակը խորը վերլուծելու ձգտում ու միտում: Դու միշտ այնտեղ ես, որտեղ ճշմարիտ խոսքի ու աչալուրջ աչքի, անկեղծ աջակցի եւ ազատ ու արդար ասելիքի միջամտության կարիք կա ու անհրաժեշտություն: Քո համայնապատկերում կյանքի բոլոր ոլորտներն են՝ պաշտոնական տեղեկատվությունից մինչեւ մշակութային, քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգեւոր... Դու լրատու ես ու լրաքաղ քո ընթերցողի համար, ուղեցույց ես ու գործընկեր, ուղեկցող ու քո հետեւից տանող ես: Շուրջ մեկ դար տարբեր ժանրերի միջոցով տարեգրում ես վիրահայերիս ու մեր երկրի եւ Մայր հայրենիքի պատմությունը՝ քո քաղաքական ու քաղաքացիական ակտիվ կենսակերպով, հետք ու կնիք թողնող գործունեությամբ, քաղաքացիական հասարակության ձեւավորման գործընթացի ծանրակշիռ մասնակցությամբ:

Դու մեր մշակույթի մեծ արժեքն ես, որ մեսրոպյան լույսն է ներս բերում վիրահայ ընտանիքներ: Դու մեր պատմության այն վավերագիրն ես, որ հայելու պես պատկերում է մեր անցյալն ու մոտիկ տասնամյակները: Ազգային արժեքներ ես քարոզում, ավանդույթ ու ճաշակ ես ձեւավորում, հոգեւոր սնունդ ես հաղորդում, այն ասպարեզն ես, որ համայնքի բարոյական էությունն է բնորոշում ու համախմբվածության խթան է հանդիսանում: Դու այն օղակն ես, որը միշտ վառ է պահում կապը Մայր հայրենիքի հետ, իսկ վերջին տարիներին նոր կշռույթով են լցվել քո էջերը, որոնք լուսաբանում են հայ ազգային մշակութային կյանքը՝ համահայկական միջոցառումների տեսքով: Քեզ սպասողների ու ճանաչողների թիվը շա՜տ է նաեւ աշխարհի տարբեր անկյուններում:

Դու ազգերի միջեւ հանդուրժողականության, մշակույթի արմատավորման ու փոխադարձ սիրո վրա հիմնված հարաբերությունների հաստատման քարոզիչն ես, ու դրա համար է, որ վերջերս արժանացել ես Վրաստանում 2015թ. լավագույն տիտղոսի կոչման, «Հանդուրժողականության աջակցի» դափնեկիրն ես, վրաց հասարակությունում մեր ինտեգրման ջատագովն ես: Դու հայ եւ վրաց բարեկամության անդավաճան ջատագովն ես, նոքարն ու ստնտուն, այն բարեկամության, որը եղել եւ մնում է մեր բոլոր հաջողությունների գրավականը:

Քո արմատները սնուցվել են մեր անցյալի հսկաներից, որոնք, ցավոք, այսօր չկան, սակայն, փառք Աստծո, որ ունենք քեզ, որ դու կաս ու մերն ես: Քո առաքելության հաջող ընթացքի համար ուզում եմ գլուխ խոնարհել բոլոր անցած-գնացած անձանց հիշատակի առջեւ, ովքեր իրենց վաստակն են ներդրել, ու երախտապարտ լինել ձեզ՝ այսօրվա խմբագիր-լրագրողական կազմիդ, անկեղծ նվիրումի ու մասնագիտական պատշաճ մակարդակի համար:

Եվ ամեն օր, երբ երեկոյանում է, մարում են աշխատանքային գրասենյակների բոլոր լույսերը քաղաքում, մինչեւ ուշ գիշեր Աթոնելի փողոցի 5 համարի չորրորդ հարկի մի լուսամուտ դեռ երկա՜ր մնում է լուսավորված:

Դու քո ծննդյան լույսն ես: Միշտ եղի'ր ու մնա' մեզ հետ...

Քո հավատարիմ բարեկամ՝

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վրաստանի կրթության ու գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական նյութերի համակարգող

«ՎՐԱՍՏԱՆ»-Ը 95 ՏԱՐԵԿԱՆ Է

ՓԱՌԱՀԵՂ ՈՒՂԻ



Դեկտեմբերին լրացավ վիրահայ մամուլի ոսկե օղակներից մեկի՝ «Վրաստան» թերթի 95-ամյակը:

Բացառիկ է նրա դերը Վրաստանի հայ ազգաբնակչության գաղափարական, գեղագիտական, կրթական-լուսավորական, հայրենասիրական դաստիարակության գործում: Ի սկզբանե թերթը եղել է իր ընթերցողների ուղենիշ աստղը եւ կյանքի գեղարվեստական-հրապարակախոսական արձագանքը: Նրա շնորհիվ, վիրահայ համայնքն անաղարտ է պահել իր ազգային սովորույթները, ավանդույթները, լեզուն, հավատը, ոգին ու կերպարանքը: Նրան աշխատակցել են հասարակական-քաղաքական, գրականության, արվեստի, գիտության ու այլ բնագավառների բազմաթիվ նշանավոր գործիչներ, ստեղծել են ուսանելի ավանդներ, եւ թերթը ձեռք է բերել հեղինակություն, յուրահատուկ դեմք ու դիմագիծ, դարձել մարտունակ եւ նպատակասլաց:

Առանձնապես վիրահայ սերունդների համար թերթը եղել է բարի խորհրդատու, նրանց բաղձանքների արտահայտիչը, այն քուրան, որտեղ թրծվել են բազում երիտասարդ ստեղծագործողների հոգեկերտվածքները:

Երախտագիտության զգացումով պիտի խոստովանեմ թերթի դերը նաեւ անձիս՝ որպես գրականագետի եւ թարգմանչի կայացման գործում, քանզի, Թբիլիսիի պետհամալսարանի ասպիրանտուրայում ուսանելուս տարիներին, նրա էջերում է տեղի ունեցել տողերիս հեղինակի գիտաստեղծագործական մկրտությունը:

1990-ական թվականներից «Վրաստանը» ձեռք է բերել նոր հատկանիշներ եւ նոր որակ: Այժմ պատմական հարուստ կենսամատյան ստեղծելու ճանապարհին է: Միայն անհրաժեշտ է համախմբվել նրա շուրջը, զորավիգ լինել եւ զորացնել, որպեսզի նա, պահպանելով անկախությունը, հավատարիմ մնա իր սկզբունքներին ու ավանդույթներին, շարունակի հարատեւել ու զարգացնել ձեռքբերումները, շարունակի կռել-կոփել մեր նախնիների կողմից մեզ ավանդված հայ եւ վրաց ժողովուրդների պատմական եզակի ու ուսանելի բարեկամությունը, էլ ավելի օգնի ինտեգրվելու վրաց հասարակական-քաղաքական կյանքին:

ՀՐԱՉՅԱ ԲԱՅՐԱՄՅԱՆ
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-վրացական հարաբերությունների բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԹԵՐԹԸ



«Վրաստան» թերթի հետ իմ ծանոթությունն սկսվել է ավելի քան կես դար առաջ, երբ ես դեռ դպրոցական էի: Մեր ուսուցիչներից շատերը Դաղեթ-Խաչենում ստանում էին այդ թերթը, եւ ես հաճախ էի տեսնում նրա լայնածավալ էջերը, տարբեր չափերի նկարները, հայոց տառերով գեղեցիկ վերնագրերը... Այդ ամենն ինձ հրապուրում եւ մեծ հետաքրքրություն էին առաջացնում իմ մեջ: Ես նոր-նոր էի անում իմ գրական առաջին քայլերը: Մի օր էլ մեր գյուղի կյանքից մի փոքրիկ թղթակցություն գրեցի եւ ուղարկեցի «Սովետական Վրաստանի» խմբագրություն: Դրանից մի երկու շաբաթ անց, դպրոցի ճամփին մեր գյուղի փոստատար քեռի Մինասը ինձ կանգնեցրեց եւ, թերթում տպագրված մի նյութ ցույց տալով, հարցրեց. «Սա դո՞ւ ես գրել»: Նայեցի ու, նրա տակ կարդալով անուն-ազգանունս, սիրտս թինթ ելավ, ուրախությունս չափ ու սահման չուներ: Ոգեւորված այդ թղթակցության տպագրությամբ, այս անգամ էլ մի քանի ոտանավոր ուղարկեցի: Այդպես, սկսվեց իմ համագործակցությունը, «Վրաստանը» դարձավ ինձ համար սիրելի թերթ, ես ամուր կապվեցի նրա հետ:

Հետո ես ավարտեցի դպրոցը, ընդունվեցի համալսարան, տեղափոխվեցի Երեւան, բայց իմ կապերը երբեք չխզեցի իմ սիրելի թերթի հետ, շարունակեցի թղթակցել, ավելի ծավալուն նյութեր պատրաստել նրա համար եւ սրտատրոփ սպասել թերթի յուրաքանչյուր համարի ստացմանը Երեւանում: Միայն ես չէի այդպիսին, Երեւանում ինձ նման կային նաեւ ուրիշները՝ Սուխումիից, Բաթումիից, Ախալցիխեից, Ախալքալաքիից, Բոգդանովկայից (այժմ՝ Նինոծմինդա) Ծալկայից եւ այլ վայրերից:

Հիմա ես կարոտով հիշում եմ այն անվանի մարդկանց դեմքերը, որոնց երբեւէ հանդիպել եմ այդ թերթի խմբագրությունում: Դեռ մտքիս մեջ է Ռուսթավելու պոդոտայի թիվ 42 շենքի պատկերը, որի ճակատին ամրացված խոշոր տառերով գրված ցուցանակը, որ գիշերները լուսավորում էր ամբողջ փողոցը, ազդարարում էր. «Ա.Ֆ.Մյասնիկյանի անվան «Զարյա Վոստոկայի» հրատարակչություն»: Ամեն անգամ, Թբիլիսիում գտնվելիս, առաջին գործս եղել է «Սովետական Վրաստան» թերթի խմբագրություն այցելելը: Ես այդ խմբագրությունում եմ ծանոթացել վիրահայ մեր անվանի շատ գրողների ու լրագրողների հետ, որոնցից էին Ծերուն Թորգոմյանը, Գեւորգ Գրիգը, Կորյուն Ազրոյանը, Աշոտ Հայրապետյանը, Սուրեն Ավչյանը, Հովհաննես Կարայանը, Սոս Սիմավորյանը, Միքայել Աղամյանը, Նորայր Երթեւցյանը, Արշավիր Բեգլարյանը, իմ հայրենակից Մարտին Քարամյանը եւ էլի շատերը: Ես երբեք չեմ մոռանա թերթի գլխավոր խմբագիր Հակոբ Բլրցյանի հայրական ջերմ վերաբերմունքը իմ նկատմամբ:

Իրո'ք, լրագրությունը չափազանց ծանր ու հոգեմաշ գործ է, իսկ լրագրողը՝ անխոնջ մշակ: Այս բանը շատ լավ են գիտակցում «Վրաստանի» աշխատակիցները եւ խորությամբ ըմբռնում ու սրբորեն կիրառում են իրենց ամենօրյա լարված աշխատանքում: Ես անչափ ուրախ եմ նաեւ, որ թերթի ներկայիս խմբագիր, հասարակական-քաղաքական ու մշակութային հայտնի գործիչ Վան Բայբուրթյանը եւս իր շուրջ երեսնամյա խմբագրական գործունեության ընթացքում «Վրաստան» թերթում, շարունակել եւ հարստացրել է թերթի ստեղծած լավագույն ավանդույթները:

Ավարտելով խոսքս՝ «Վրաստան» թերթի 95-ամյա տարելիցին ի սրտե շնորհավորում եմ խմբագրության բոլոր աշխատողներին եւ նրանց ցանկանում ստեղծագործական անսպառ եռանդ ու քաջառողջություն, ինչպես եւ հաջողություններ՝ իրենց հայրենանվեր գործում:

ՎԱՀԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Երեւան

ԻՄ ՎԱՂԵՄԻ ԲԱՐԵԿԱՄ, ՄԱՇՏՈՑԱՏԱՌ «ՎՐԱՍՏԱՆ»

Այո, այո, գալիս եմ տանից՝ Երեւանից, եկել եմ տուն՝ Թբիլիսի: Իմ քաղաք, դեռ մանկուց հիացել եմ քո շքեղությամբ, լուսապայծառ գմբեթների առատությամբ, զգացել եմ ինձ քո նեղլիկ փողոցներում որպես մասնիկ իմ քաղաքի:

Մի քիչ վրացի ու ասորի, մի քիչ հույն ու հրեա, բայց աղոթել եմ միշտ իմ հարազատ Սուրբ Գեւորգում: Նրա հարթակից զմայլվում եմ դիմացս վեհացող վերածնված տաճարով՝ Սուրբ Էջմիածնով, ճախրող Փարաջանովով եւ Մեծն Սայաթ-Նովայի սազով:

Եկեղեցում եմ՝ խնկաբույր կամարների ներքո եւ, ինչպես միշտ, դու էլ ես այստեղ իմ վաղեմի բարեկամ՝ «Սովետական» եւ «Խորհրդային», իսկ այժմ համեստ պարբերական, մաշտոցատառ «Վրաստան»:

Թերթում եմ էջերդ՝ 95 տարի դու եղել ես վիրահայոց կյանքի անընդմեջ վկան, քո մեջ կրում ես մեր ժողովրդի մի ստվար զանգվածի հիշողությունն ու պատմությունը, նրա կորուստները եւ ձեռքբերումները, պարտություններն ու հաղթանակները: Անցել ես պատերազմներով, բոհ ու բոհով, խաղաղ շինարար կյանքով, ճակատագրերով ու կենսագրություններով եւ կաս առ այսօր:

Ասում են՝ դու էլ ես իշխանություն, բայց չորրորդ:

Իրականում վիրահայության չորրորդ հենասյունն ես՝ քո քույրերի Հայոց պանթեոնի, թատրոնի եւ սրբազան առաջնորդարանի հետ միասին:

Մաղթում եմ քեզ երկար դարեր եւ, եթե գեթ մի հայ կա Վրատանում՝ թող դու ապրես «Վրաստան»:

Շնորհավորանքներով՝ Քեր
ԳԱԳԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ
«Ապավեն» ընկերության հիմնադիր-տնօրեն
Երեւան

ՄԵՐ ԷՆԵՐԳԵՏԻԿՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ

1920 թվականի դեկտեմբեր ամսին լույս տեսավ «Վրաստան» թերթի առաջին համարը: Թերթի աշխատակիցները անցած տարիների ընթացքում մեծ ծավալի աշխատանքներ են կատարել տնտեսության, մշակույթի եւ գրականության լուսաբանման համար:

Հայաստանի էներգետիկների անունից շնորհավորում եմ «Վրաստան» թերթի 95-ամյակի առթիվ: Ցանկանում եմ քաջառողջություն, նորանոր հաջողություններ եւ ամենայն բարիք:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի նախագահ, ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի անդամ
Երեւան

ՊԱՏՎՈՎ ԿԱՏԱՐԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հեռավոր ԱՄՆ-ից ի սրտե շնորհավորում եմ Թբիլիսիում լույս տեսնող միակ համավրաստանյան հայատառ հասարակական-քաղաքական թերթի՝ «Վրաստանի» 95-ամյակը: Ցանկացած հայոց պարբերական, որ լույս է տեսնում սփյուռքում, արդեն գովելի է ու արժանահիշատակ: Մանավանդ՝ հայաշատ կենտրոններում: Իսկ Թբիլիսին՝ որպես հայ մշակույթի փառավոր կենտրոն, բոլորիս է հայտնի: Ես համարձակ կարող եմ ասել, որ այս թերթը իր գոյության գրեթե մեկ դարի ընթացքում պատվով ու գեղեցիկ է կատարել իր առաքելությունը: Ես դեռ Երեւանում բնակվելու տարիներից եմ ծանոթ այս թերթին, եւ այն ժամանակ, երբ այնքան մերձ չէր Հայաստան-սփյուռք կապը, մյուս թերթերի հետ միասին, ստացել եմ նաեւ «Սովետական Վրաստան» թերթը ու ավելի շատ այդ թերթի շնորհիվ իրազեկվել մեր հարեւան երկրում՝ շատ սիրելի Վրաստանում, կատարվող քաղաքական-հասարակական իրադարձություններին, բնականաբար նաեւ վիրահայոց կյանքին վերաբերող: Ինձ համար այն միշտ կամուրջի դեր է կատարել հայ ու վրաց ժողովուրդների միջեւ, սիրել տվել վրաց ժողովրդին՝ որպես մտերիմ բարեկամի: Իմ կապն այսօր այս, ես կասեի բարի ու շատ կարեւոր թերթի հետ, շարունակվում է համացանցի միջոցով (փառք Աստծու, կա, գործում է թերթի էլեկտրոնային տարբերակը, ու ես ամեն շաբաթ կարողանում եմ ծանոթանալ նյութերի հետ: Բացի դրանից, մտերիմ բարեկամներս՝ Անահիտն ու Գայանեն են աշխատում այնտեղ, ու դա ավելի է օգնում իմանալ թերթի առօրյայի մասին: Հուսամ՝ Թբիլիսի հաջորդ այցիս կայցելեմ Վրաստանի խմբագրատուն: Իսկ մինչ այդ, շնորհավոր փառավոր 95-ամյակը, հարգարժան խմբագիր պարոն Վան Բայբուրթյան: Ապագան առջեւում է:

Սիրով՝ ԱՎԻԿ ԴԵՐԵՆՑ
Բանաստեղծ
Բոստոն

ԵՍ ԿՇՆՈՐՀԱՎՈՐԵՄ ՔՈ 100-ԱՄՅԱԿԸ, ՍԻՐԵԼԻՍ

Նախկին մանկավարժ եմ: Ես ու «Վրաստան» թերթը համարյա տարեկիցներ ենք: Նա մեկ տարով է մեծ ինձնից՝ ես շուտով կդառնամ 94 տարեկան, նա արդեն 95 է: Հետեւաբար՝ թերթի վաղուցվա երկրպագուն եմ ու նրա հավատարիմ ջատագովը: Թերթի գալուն սպասել եմ դեռ դպրոցական, ուսանողական տարիներից մինչեւ այսօր, ու երբ մի համարը մի փոքր ուշ եմ ստանում, արդեն խառնվում, իրար եմ անցնում: Այսպես սպասում են սիրելի մարդուն, ում միշտ տեսնել են ուզում, ում հետ կիսվել են ուզում, ումից սովորել են ուզում: Մեր՝ թբիլիսահայերի այնքան սիրելի թերթն ինձ համար այդ սիրելի մարդն է ասես: Ու ես ե'ւ երջանիկ եմ, որ այն կա, հարատեւում է, թող որ մեծ դժվարությունների գնով, եւ տխրում եմ շատ հաճախ, որ թերթն այսօր լույս է տեսնում շաբաթը մեկ: Ի տարբերություն նախկին շաբաթը երեք անգամի: Ասեմ նաեւ, որ լավ եմ ճանաչում եւ թերթի խմբագրին ու նրա աշխատակազմին: Եվ հարգում եմ նրանց՝ իրենց կամքի ու դժվարություններին դիմագրավելու համար: Հպարտ եմ, որ երկու սերունդս՝ դուստրս եւ թոռնուհիս՝ Անահիտ եւ Գայանե Բոստանջյանները արդեն վաղուց լծված են թերթի ընդհանուր գործին: Շնորհավոր 95-ամյակդ, սիրելի իմ «Վրաստան», բարեկեցիկ աշխատանքային օրեր եմ մաղթում Քեզ, սիրելի Վան, թերթի սիրելի աշխատակիցներ: Հիմա գրում եմ այս տողերն ու մտածում՝ տեսնես կգա՞ այն օրը, որ ես կարողանամ շնորհավորել թերթի 100-ամյակը՝ ինքս էլ արդեն հարյուրի շեմին: Ո՞վ իմանա: Մեկ էլ տեսար:

ՄԱՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ
94 տարեկան
Հայոց լեզվի ու գրականության նախկին ուսուցիչ
Թբիլիսի

«ՎՐԱՍՏԱՆ»-Ը 95 ՏԱՐԵԿԱՆ Է

ԱՊԱԳԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

Վրաստանի հայալեզու «Վրաստան» թերթի 95-ամյակի առթիվ ի սրտե շնորհավորում եմ թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանին, խմբագրակազմին, պարբերականի բոլոր ընթերցողներին:

«Վրաստանը» այն բացառիկ թերթերի թվին է պատկանում, որը կարողանում է իր էջերում անդրադառնալ հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներին, օբյեկտիվ ներկայացնել իրադարձությունները: Թերթի առանձնակի ուշադրության առարկան է մշակույթը: Այն առաջիններից մեկն էր, որ լուսաբանեց Վրաստանի եւ Հայաստանի մշակույթի նախարարությունների համագործակցության փաստը, որն իր անմիջական արտացոլումը գտավ Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգման գործում:

Թանկագին բարեկամներ, թերթի 95-ամյակի առթիվ մաղթում եմ ստեղծագործական հաջողություններ, բազում ընթերցողներ ու վստահություն հայտնում, որ առաջիկայում եւս կշարունակենք մեր արգասաբեր համագործակցությունը՝ ի պահպանություն մեր ավանդույթների ու նախնիների ժառանգության:

ՄԻԽԵԻԼ ԳԵՈՐԳԱՋԵ
Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պաշտպանության նախարար

«ԳՅՈՒՐՋԻՍՏԱՆԻ» ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԸ ՔԵԶ՝ «ՎՐԱՍՏԱՆ»



Թանկագին գործընկերներ, հարգելի բարեկամներ.

Այսօր ձեր տոնն է: Մեր անունը «Գյուրջիստան» է, այսինքն՝ «Վրաստան», ձեր անունը նույնպես՝ «Վրաստան»: Մենք յուրօրինակ եկվորյակներ ենք, չնայած մեր թերթը «Վրաստան»-ից մեկ տարով փոքր է, բայց երկուսս էլ ծառայում ենք մեր ժողովուրդներին, Վրաստանի հայազգի ու ադրբեջանի քաղաքացիներին, մեր երկրին ու պետությանը:

Շնորհավորում եմ ձեզ 95-ամյա հոբելյանի առթիվ: Դուք մեծ հաջողությամբ անցաք այս պանծալի ուղին: Եղել են բարդություններ, սակայն «Վրաստանի» սկզբունքային, համախմբված կոլեկտիվը հաջողությամբ հաղթահարեց բոլոր հիմնախնդիրները: Համոզված եմ, որ կոլեկտիվը, որին երկար տարիներ ղեկավարում է փորձառու հրապարակախոս, ճանաչված հասարակական-քաղաքական գործիչ Վան Բայբուրթյանը, առաջիկայում կշարունակի իր նախնիների մեծ գործը, կնպաստի Վրաստանի զարգացմանը:

Մաղթում եմ Ձեզ հաջողություններ աշխատանքում եւ կյանքում:

«Գյուրջիստան» թերթի խմբագրության անունից
ԻՍԼԱՄ ԱԼԻԵՎ՝ թերթի խմբագիր

ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԳԱՆՔ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՂ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ



Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ եւ Ձեր խմբագրակազմին «Վրաստան» թերթի 95-րդ տարելիցի առիթով: Մաղթում եմ բոլորիդ քաջառողջություն, ստեղծագործական հաջողություններ եւ անձնական-ընտանեկան երջանկություն:

Հարկ եմ համարում մի հետադարձ հայացք գցել ու հիշեցնել մեր հարգելի ընթերցողներին, որ թերթի կյանքում բեկումնային հանդիսացան 1986-1987 թվականները, երբ խմբագիր նշանակվեց Վան Բայբուրթյանը:

Հատկանշական է, որ նորանշանակ խմբագիրն արդեն ուներ բավականին հարուստ փորձ ժուռնալիստիկայի բնագավառում: Նա դեռեւս ուսանողական տարիներին աշխատակցել է «Մոլոդյոժ Գրուզիի», «Վեչերնի Տբիլիսի», նաեւ «Սովետսկի սպորտ», «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթերին:

Եվ պատահական չէր, որ «Վրաստանը» նոր թափ ու լիցք ստացավ թե՛ բովանդակային եւ թե՛ ձեւավորման առումով:

Եվ ահա, տասնամյակներ շարունակ պահպանելով անցյալի արժեքավոր ավանդույթները, «Վրաստանը» լինելով մեր միակ համավրաստանյան հայալեզու թերթը, հավատարմորեն է ծառայում վիրահայերիս կյանքի, հիմնախնդիրների եւ ակնկալիքների լուսաբանմանը:

Անհրաժեշտ է նաեւ շեշտել թերթի բացառիկ դերը, ներդրած ավանդը վրաց եւ հայ ժողովուրդների միջեւ դարերի խորքից եկող ու ավանդական բնույթ կրող բարեկամական, եղբայրական հարաբերությունների ամրապնդման գործում:

Երախտագիտությամբ պետք է ընդգծել նաեւ թերթի ցուցաբերած մշտական ուշադրությունն ու հոգատարությունը հանրապետության հայկական կրթօջախների նկատմամբ: Ձեք գտնի թերթի համարյա եւ ոչ մի համար, որտեղ զետեղված չլինեն ուշագրավ ու հետաքրքիր հոդվածներ՝ նվիրված դպրոցների առօրյային՝ նրանց հիմնախնդիրներին, առանձին ձեռքբերումներին ու թեմատիկ բազմաբովանդակ միջոցառումներին:

Սիրելի բարեկամներ, թույլ տվեք օգտվելով պատեհ առիթից, շնորհավորել Ձեզ գալիք Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ: Թող 2016 թվականին Ձեզ ուղեկցեն ուրախությունը, բարեկեցությունը, արարելու եռանդն ու լավատեսությունը:

Խորին հարգանքով՝ ՆՈՐԱՅՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Վրաստանի կրթական համակարգի վաստակաշատ գործիչ

ՍԻՐՈՒՄ ԵՄ «ՎՐԱՍՏԱՆԸ», ԵՎ ՆՈՐ ՉԵՄ ՍԻՐՈՒՄ



Միանգամից ասեմ, որ ես սիրում եմ «Վրաստան» թերթը, եւ նոր չեմ սիրում: Ես նույնիսկ չեմ հիշում, թե երբվանից, այնքան որ միաձույլ է իմ անձի հետ այս թերթի գոյությունը: Հիշում եմ՝ դեռ շատ փոքր էի, երբ փոստատարը օրումեջ, ամեն առավոտ բերում էր մեր տուն «Սովետական Վրաստանի» թարմ օրինակը: Ես այդ ժամանակ շատ փոքր էի, դպրոց էլ չէի գնում: Հասուն տարիքում՝ ավելի շատ, քանզի հասկացա, որ մարդու, Վրաստանի քաղաքացու, վիրահայի ձեւավորման մեջ անգնահատելի է երկրում այս միակ հայատառ թերթի կարեւորությունը: Թերթը իր գոյության 95 տարիների ընթացքում օգնել է վիրահայերիս, սիրել մեր երկիրն ու մեր երկու ժողովուրդների՝ հայերին ու վրացիներին, ու բարձր պատվանդանի վրա պահել այդ բարեկամությունը: Ես ինձ թերթի լավագույն բարեկամն եմ համարում, ուզում եմ, որ այն հարատեւի, ու չնայած այսօրվա բազմաթիվ խոչընդոտներին, շարունակի իր բարի առաքելությունը, եւ բոլորս միասին հավուր պատշաճի տոնենք նրա մեկ դարը:

Վերջում, մի հաճելի պարտականություն եւս. Համաշխարհային հայերի կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը խնդրեց իր անունից ջերմ ողջույններ հաղորդել «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանին ու ողջ խմբագրակազմին եւ շնորհավորել պարբերականի 95-ամյա հոբելյանի առթիվ:

ՌԱՖԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ
Համաշխարհային Հայկական կոնգրեսի վարչության անդամ, գործարար

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՁԱՏԱԳՈՎ, «ՎՐԱՍՏԱՆ»

Հարգարժան խմբագի՛ր, թույլ տվեք շնորհավորանքներս հղել Ձեզ եւ ի դեմս Ձեզ ողջ խմբագրակազմին «ՎՐԱՍՏԱՆ» պարբերականի 95-ամյակի կապակցությամբ:

95 տարի ծառայել երկրին ու քո ազգին՝ առանց արգելքների ու խոչընդոտների, սովորական երեւույթ չէ, այլ խոսուն փաստ, վառ վկայություն մեր՝ հայ եւ վրաց ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունների եւ միմյանց նկատմամբ հանդուրժողականության: Շնորհիվ թերթի, վիրահայությունը միշտ էլ իրազեկ է եղել եւ լինում է մեր երկրի քաղաքական ու հասարակական անցուդարձին: Եվ ոչ միայն մեր երկրի: Դուք իրավունք ունեք հպարտանալու, քանզի այս երկար ու ձիգ տարիներն անցել եք բովանդակալից եւ ազնիվ ճանապարհով:

Մեր՝ ընթերցողներիս ցանկությունն է, որ անցնելիք առաջիկա ճանապարհը եւս լինի բեղմնավոր, միշտ կանաչ, նաեւ հույս ենք հայտնում, որ «ՎՐԱՍՏԱՆԻ» խմբագրական կազմն իր արդյունավետ աշխատանքով մոտ ապագայում կգրանցի ցանկալի արդյունքներ, այն է՝ ավելացված քանակ եւ մեծացված ծավալ:

Միշտ Ձեր բարեկամ՝

ԷՄՄԱ ԱԽՏՅԱՆ
Պրոֆեսոր

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԱԿՈՒՈՒՄԸ ԼՐԱՅՆՈՂ ԹԵՐԹ

Խմբագրության հարգելի՛ աշխատակիցներ ու վետերաններ: Ընդունեք իմ անկեղծ ու ջերմ շնորհավորանքները թերթի 95-ամյակի կապակցությամբ: «Վրաստանը» հարմոնիկ, բազմաբնույթ պարբերական է, որը ներկայացվում է մասնագիտական բարձր մակարդակով: Թերթը մեծ ժողովրդականություն ու սեր է վայելում Վրաստանի հայազգի բնակչության շրջանում: Դա խմբագրության աշխատակիցների կողմից պատասխանատու, քրտնաջան ամենօրյա աշխատանքի արժանի արդյունքն է: Պարբերականն աչքի է ընկնում հրապարակումների բացառիկ վերլուծական ու պարզ հոգեկան ոճի համատեղմամբ, բազմերանգությամբ, ընդգրկվող թեմաների մասշտաբայնությամբ եւ իր ընթերցողների շահերի նկատմամբ մշտական ուշադրությամբ:

«Վրաստան» թերթը յուրովի լրացնում է տեղեկատվության ստացման հարցում Ջավախեթիի հայալեզու բնակչության տեղեկատվական վակուումը:

Թանկագի՛ն բարեկամներ, մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, երջանկություն, հավատարիմ ընթերցողների եւ մասնագիտական հաջողություն:

ԱՐՄԵՆ ՄԱՐԱՆԳՈԶՅԱՆ
Վրաստանի ժողովրդական պաշտպանի ներկայացուցիչ Սամցխե-Ջավախեթիում

ԴՈՒ ՄԵՐ ՀԱՅԵԼԻՆ ԵՍ, «ՎՐԱՍՏԱՆ»

Ես երկարամյա մանկավարժ եմ, եւ ներկա աշխատանքիս բերումով էլ լավ գիտեմ, որ մեր՝ Ծալկայի շրջանը «Վրաստան» թերի ամենահավատարիմ բարեկամներից մեկն է: Գիտի, որ թերթն ունի շատ մեծ առաքելություն՝ նախ մեր վիրահայերիս կյանքի հայելին լինելու առումով, ապա մեր երկրում կատարվող բոլոր նշանակալից իրադարձությունները լուսաբանելու ու մեզ ներկայացնելու եւ վերջապես հայ-վրաց բարեկամությունը միշտ բարձր հիմքերի վրա պահելու առումով: Մեր բոլոր գյուղերում ստանում են թերթը ու գոհ են թերթից: Ասեմ, որ անձամբ ես թերթի մեծ երկրպագուն եմ ու հավատարիմ բաժանորդը ու չեմ պատկերացնում պարզապես, որ ինչ-որ մեկը խնայի այն չնչին գումարը, որով գնահատված է թերթը: Եվ էժան է գնահատված միայն մի պատճառով՝ ելնելով ազգաբնակչության կենցաղային սուղ պայմաններից: Փառք Աստծո, մեր շրջանում բաժանորդագրության պրոբլեմը չկա: Մենք սիրում ենք թերթը ու գնահատում նրա դերը մեր կյանքում: Իսկ ում գնահատում, նրան սիրում են, եւ ում սիրում, նրան գնահատում են: Սրտանց շնորհավորում եմ թերի 95-ամյակը եւ է՛լ ավելի շատ բաժանորդներ մաղթում նրան ու ավելի հաճախակի պարբերականություն:

ՄԱՐԳՈ ՄԻՆԱՍՅԱՆ
Թերթի բաժանորդ, մանկավարժ
ք. Ծալկա

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՄԵՐ ԵՎ ՁԵՐ 95-ԱՄՅԱԿԸ

Երբ խոսում են «Վրաստան» թերթի մասին, ես անմիջապես պատկերացնում եմ այն տարիները, երբ մեր՝ Ախալցիխեի շրջանում բաժանորդների թիվը հասնում էր հազարների... Ու մարդիկ սիրով, անհամբերությամբ էին սպասում, թե երբ պիտի իրենց շեմերից ներս մտներ թերթը: Շաբաթը երեք անգամ ուրախացներ իրենց, բավարարեր իրենց հուզող հարցերի պատասխաններն ու ծանոթացներ մեր երկրում ու վիրահայության կյանքում ընթացող կարեւոր իրադարձություններին: Եվ այս համատեքստում, անշուշտ, նաեւ մեր ախալցխացիների կյանքին: Թերթը մեզ այսօր էլ է պարգեւում այդ ուրախությունը: Բայց պարզապես չգիտեմ, ինչու է պակասել այսօր բաժանորդների թիվը: Մեր գյուղում էլ՝ Ծղալթբիլայում: Թեեւ շատ ենք սիրում թերթը, հպարտանում նրա գոյությամբ: Կարծում եմ, սա ժամանակավոր երեւույթ է, դժվարին ժամանակների հետ կապված: Հուսով եմ, որ թերթն առաջվա նման կունենա իր գիտակից ու արժանավոր մեծաքանակ բաժանորդներին եւ մեր շրջանում, որովհետեւ այն նաեւ մեր կյանքի հայելին է: Մենք սիրում ենք «Վրաստան» թերթը եւ աղոթում նրա բարեկեցության ու հարատեւության համար: Շնորհակալություն Ձեզ, հարգարժան խմբագիր՝ պարոն Բայբուրթյան, թերթի մյուս աշխատակիցներ: Շնորհավոր մեր ու ձեր լուսավոր թերթի 95-ամյակը:

ՍՎԵՏԼԱՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Ծղալթբիլայի հանրային դպրոցի տնօրեն
Ախալցիխեի մունիցիպալիտետ

ՄԵՆՔ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԵՆՔ ԻՐԱՐ, «ՎՐԱՍՏԱՆ»

Բոլնիս-Խաչենում հարգում ու սիրում են «Վրաստան» թերթը: Եվ այս սերը հին պատմություն ունի. այն փորձած թանի պես է: Մենք հավատարիմ ենք իրար, եւ այս հավատարմությունն էլ հին է. հին գինու նման: Անհնարին է, կարծում եմ չսիրել, առավել եւս չձգտել պահպանել սերը: Չնպաստել այդ պահպանությանը: Թերթը մենք որակում ենք որպես մեր ցանկությունների, մեր իղձերի արտահայտիչ ու ամեն մեկիս ու բոլորիս, մեր ամբողջ երկրի ու նաեւ մեր Մայր հարենիքի կյանքի հայելի: Միշտ սպասել ու սպասում ենք թերթին: Ճիշտ է, այսօր քչացել է բաժանորդների թիվը (քչացել է նաեւ բնակիչների թիվը), բայց մեր դպրոցում դարձյալ սիրով ու անհամբերությամբ են սպասում մեր հնամյա, փառավոր ուղի անցած թերթին ու դեռ սովորում նրանից ու դեռ շատ կսովորեն՝ ինչպես բարի խորհրդատուից, որ առաջին հերթին սեր, միասնություն, խաղաղություն ու բարեկամություն է քարոզում:

Արդ, շնորհավոր պանծալի 95-ամյակդ, սիրելի «Վրաստան»: Լույս քո ճանապարհներին՝ ե՛ւ հեշտ, ե՛ւ դժվարին: Բարով տեսնենք հարյուրամյակդ:

ՄԵԽԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Բոլնիս-Խաչենի հանրային դպրոցի տնօրեն
Բոլնիսիի մունիցիպալիտետ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՍՈՒՐԲ ՃՆՆԴԻ ԱՌԹԻՎ

ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՈՒՂԵՐՁԸ ԿԱԹՈԼԻԿ ԱՇԽԱՐՀԻՆ

Հռոմի Ֆրանցիսկոս պապը դեկտեմբերի 25-ին շնորհավորել է ամբողջ աշխարհի կաթոլիկներին՝ Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ: Կաթոլիկ եկեղեցու առաջնորդը հանդես է եկել ամենամյա կոչով եւ օրհնությամբ, որում հիշել է Եգիպտոսում եւ Փարիզում շաբաթներ առաջ տեղի ունեցած ահաբեկչական հարձակումների հետեւանքով զոհվածներին, ինչպես նաեւ՝ կոչ է արել Արեւմուտքին եւ Ռուսաստանին կատարել Ուկրաինայի հարցով ձեռք բերված համաձայնության կետերը:

Ֆրանցիսկոս պապը հիշեցրել է, որ այնտեղ, որտեղ Քրիստոսն է ծնվել, ծնվել է հույսն ու խաղաղությունը, իսկ որտեղ ծնվել է խաղաղությունը, այնտեղ այլեւս տեղ չունեն ատելությունն ու պատերազմը:

ՆԱԽԱՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԱԼԴ ԲԱՐԻ, ՆՈՐ ՏԱՐԻ

Հաշվված օրեր են մնացել Նոր տարուն՝ մեր ամենասիրված տոնին: Սկսվում է նոր՝ 2016թ.-ը, այսինքն՝ նոր շրջան մեր կյանքում, իսկ հնից նորին անցումը, ինչպես գիտենք, ունի իր պահանջները:

Տոնին նախապատրաստումը ենթադրում է՝ մաքրություն, զարդարանք՝ բնակարանում եւ տոնական տրամադրություն:

Անցման խորհրդավոր ու անհրաժեշտ պայմաններից մեկն էլ՝ նրան մեր ֆիզիկական եւ հոգեկան նախապատրաստումն է: Այստեղ մեզ անհրաժեշտ է դիմել աստղագետներին, իսկ նրանք, ահա թե ինչ են խորհուրդ տալիս.

Սիրելի տանտիկիններ, մի' մոռացեք մաքրման ավանդական կարգը ավարտել՝ վառված մոմով բնակարանում շրջապտույտի եւ սուրբ ջրի ցողման արարողությամբ:

Մինչ Նոր տարին, խիստ կարեւոր է ներում խնդրել Վերին ուժերից եւ ա'յն մարդկանցից, ում կամա թե ակամա վիրավորել եք հեռացող տարում: Ազատեք ձեր հոգին չարից, ինչը վնասում է, նախեւառաջ, անձամբ ձեզ:

Եթե այս օրերին չազատվեք փողային պարտքերից, մեծ է հավանականությունը, որ 2016-ին անընդմեջ պարտքերի մեջ լինեք:

Կարեկից եւ հոգատար եղեք նրանց հանդեպ, ովքեր զգում են դրա կարիքը: Բառի ամենաուղղակի եւ փոխաբերական իմաստով՝ ջերմացրեք մրսածին, մի' խնայեք ձեր բարի խորհուրդը մոլորվածին:

Մաքրեք ձեր մտքերն ամենայն նեգատիվից:

Տոնածառը զարդարեք դրական հույզերով, թեթեւացած հոգով:

Առանձին օր եւ խաղաղ պահ ընտրեք՝ աղոթքի համար:

Ամանորյա սեղանը զարդարեք վառվող մոմերով, իսկ ուտեստները թողնվում են ձեր հայեցողությանը,- սեղանին մատուցեք ձեր նախասիրած կերակրատեսակները:

Նախատոնական հագուստն ընտրելիս՝ ջանացեք կրել ա'յն զարդը եւ հագուստը, որը ձեզանում կարթնացնի բացառապես լուսավոր հույզեր կամ հուշեր:

Ամանորյա սեղանի շուրջ նստեք սրտամոտ բարեկամների ու հարազատների հետ, հրաժարվեք տխուր, կաշկանդող, ճնշող զգացումներից ու հուշերից: Պահպանեք հոգեկան հավասարակշռության այդ ալիքը՝ Նոր տարին ավետող խորհրդավոր 12 ղողանջների հնչելու պահին եւ հետո՝ հնարավորինս երկար:

Երջանիկ Նոր տարի բոլորիս:

Պատրաստեց
ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

ՊՐԵՄԻԵՐԱ

«ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՎԱՂՎԱ ՀԱՄԱՐ»

Դեկտեմբերի 21-ին, Թբիլիսիի Գրիբոյեդովի անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնի փոքր դահլիճում, թբիլիսահայ թատերասերը դիտեց՝ «Ցանկություններ՝ վաղվա համար» ներկայացման պրեմիերան, որը բեմադրել է Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի երիտասարդ դերասան ու ռեժիսոր, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի՝ Գյումրիի մասնաճյուղի, ավարտական կուրսի ուսանող Գագիկ Մելքումյանը:

Ներկայացումը բեմադրված է ըստ ուկրաինացի ժամանակակից դրամատուրգ Ալեքսանդր Վիտեր Միրոշնիչենկոյի՝ «Կայարան կամ՝ ցանկությունների չվացուցակ՝ վաղվա համար» պիեսի, իսկ ներկայացումը՝ ռեժիսորական մոտեցմամբ, կոչվում է «Ցանկություններ՝ վաղվա համար»:

Նկարչական ձեւավորումը եւ պարերի բեմականացումը Թամարա Աղաջանովայի եւ Նինա Կերվալիշվիլու:

Ներկայացումը նվիրված էր վերջերս վախճանված թատերագետ, դրամատուրգ, ՀՀ վաստակավոր գործիչ, պիեսի թարգմանության հեղինակ Լեւոն Մուքաֆյանի հիշատակին, ում մահվան քառասունքը լրացավ հենց այդ օրը՝ դեկտեմբերի 21-ին:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

ՇՔԱՆՇԱՆ՝ ԲԱՑԱՌԻԿ ՃԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանրագումարելով «Կանանց տարի» հռչակած 2015 թվականի արդյունքները, երկրի ու հասարակության առջեւ բացառիկ ծառայությունների, հասարակական գործունեության ու քաղաքացիական անձնազոհության համար Իրինա Ենուքիձեին ետմահու պարգեւատրեց Թամար թագուհու շքանշանով, իսկ դեռեւս անցյալ դարի 20-ական թվականներին զոհված Մարո Մաղաշվիլուն շնորհեց Վրաստանի ազգային հերոսի կոչում:

Հիշեցնենք, որ Իրինա Ենուքիձեն Վրաստանի ՆԳ նախարարության աշխատակիցների կողմից 2006 թվականի հունվարի 26-ին, Թբիլիսիի մոտակայքում, Օքրոողանայում սպանված Սանդրո Գիրգվլիանու մայրն էր: Որդու վախճանից հետո նա շարունակում էր պայքարել արդարության հասնելու համար եւ պահանջում պատժել սպանության բոլոր մասնակիցներին: Իրինա Ենուքիձեն վախճանվեց 2007 թվականի օգոստոսին:

Մարո Մաղաշվիլին, 19-ամյա աղջնակը, յունկերների հետ միասին Թբիլիսիի մատույցներն էր պաշտպանում Կարմիր բանակի զորամասերից եւ զոհվեց անհավասար մարտում:

«Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես վշտակցում է Աշոտ եւ Կարո Մելքոնյաններին, սիրելի մոր, «Վրաստան» թերթի նախկին սեփական թղթակից Ախալքալաքիի շրջանում երջանկահիշատակ Աղասի Մելքոնյանի տիկնոջ՝

Կատյա Հովհաննեսի Մելքոնյանի

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի մերձավորներին ու հարազատներին:

Թերթի հաջորդ համարը լույս կտեսնի 2016 թվականի հունվարի 1-ին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 9.Սեղանի խաղ: 10.Բախտ, վիճակ: 11.Գիշատիչ թռչուն: 12.Խոտ հնձելու գործիք: 13.Վրաստանի ֆուտբոլի հավաքականի դարպասապահ ... Ռեւիշվիլի: 14.Ուկրաինայի դրամական միավորը: 19.Ավստրո-գերմանական ժողովրդական պար: 23.Հոլանդացի փիլիսոփա: 24.Յուղատու սերմերով միամյա բույս, համեմունք: 25.Պետություն Աֆրիկայում: 26.Արգենտինայի մանրադրամը: 27.Ծաղկի կենտրոնական մասը, որտեղ տեղավորված են պտուղն ու սերմերը: 29.Իտալացի կոմպոզիտոր եւ ջութակահար: 34.Գերբնական ընդունակություններ ունեցող անձ, վհուկ: 36.Վրաց մարզական մեկնաբան, Վրաստանի ժողովրդական արտիստ ... Մանջգալաձե: 37.Հայ ֆանտաստ գրող: 38.Եզնազգի խոշոր կաթնասուն կենդանի: 39.Կոմիկական դերեր կատարող դերասան: 40.Պարահանդեսային պար:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մարսողության օրգան: 2.Արեւադարձային պտուղ: 3.Սխտորի, ընկույզի իրարից թաղանթով բաժանված ամեն մասը: 4.Կապկի տեսակ: 5.Ձինվորական կոչում: 6.Լուսավորության ջահ: 7.Տեղանքի սխեմատիկ գծագիր: 8.Առեւտրի կազմակերպման ձեւ: 15.Բալետի ռուս նշանավոր պարուհի: 16.Պատմական Հայաստանի մայրաքաղաքներից: 17.Գետ Վրաստանում: 18.Հացահատիկները հնձելուց հետո գետնին ցցված ծղոտները: 20.Սնվելու որոշակի համակարգ: 21.Մարդու ամբողջ հասակով արձան: 22.Ինքնաթիռները վերանորոգելու կառույց: 26.Սպանիչ ծաղրանք: 28.Քաղաք Վրաստանում: 30.Գիտական ենթադրություն, տարբերակ: 31.Շախմատի աշխարհի նախկին չեմպիոն: 32.Փշատերեւ հսկա ծառ: 33.Նահանգ ԱՄՆ-ում: 35.Լարային գործիքի փայտե կորպուսի մասը: 37.Ցածր ձայնով ասված խոսք, փսփսոց:

Կազմեց ***ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Յալթա: 6.Կարս: 9.Վասակ: 10.Վրաերթ: 12.Ֆիլմ: 14.Փանջարա: 19.Սվիֆթ: 22.Հլու: 23.Ամրակուռ: 25.Վուդի: 27.Լիանա: 30.Անդրե: 32.Նաոմի: 35.Լռիր: 37.Ասֆալտ: 38.Սա: 39.Ճար: 40.Ուշի: 41.Դե: 42.Նեոն: 44.Ճան: 46.Վտիտ: 48.Եզդի: 50.Նոճի: 51.Իբր: 52.Դեր: 53.Նանե: 57.Ում: 59.Ձիմ: 62.Ուսամա: 64.Մյանմա: 65.Ուռուցք: 66.Չիր:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Աբաս: 3.Թարփ: 4.Բանջար: 5.Համր: 7.Արի: 8.Սվան: 11.Թավադ: 13.Մութ: 15.Արաբո: 16.Ասուլիս: 17.Լուվր: 20.Վռի: 21.Ֆան: 22.Հոն: 24.Մինի: 26.Ուելս: 28.Արահետ: 29.Արտիստ: 30.Աղավնի: 31.Դիեգո: 33.Արճիճ: 34.Մարինո: 36.Ռաունդ: 41.Դվին: 43.Ներու: 45.Անրջանք: 47.Ինն: 49.Իդեա: 54.Այսօր: 55.Եղնիկ: 56.Ալմա: 58.Մումու: 60.Մինչ: 61.Ձառ: 63.Սառ:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445